

**«Իմաստության արկղիկը» և «Չինական ճեպանկարներ» գրքերի
շնորհանդես Հայաստանի ազգային գրադարանում**

Նոյեմբերի 23-ին Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ չինական «Իմաստության արկղիկը» առակների և Սերգո Երիցյանի ուղեգրությունների «Չինական ճեպանկարներ» գրքերի շնորհանդեսը:

Իրենց ներկայությամբ շնորհանդեսը պատվել էին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նադդայանը, ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրջյանը, Հայաստանում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլունը, այլ գերատեսչություններից, գրողներ, արվեստագետներ, ուսուցիչներ և աշակերտներ:

Օրվա բանախոսը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանն էր, ով ոչ միայն գիրք է գրել մեր բարեկամ երկիր՝ Չինաստան կատարած ստեղծագործական ճամփորդության նյութերով, այլ կազմել և խմբագրել է «Իմաստության արկղիկ» առակների ժողովածուն:

Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը ողջունեց նման կարևոր գրքերի հրատարակությունները և տեղեկացրեց, որ Ազգային գրադարանում գործում է չինական գրականության անկյուն: Հայ-չինական կապերի զարգացման ու ամրապնդման, Հայաստանում չինական մշակույթի և չինարեն լեզվի տարածման գործում ունեցած մեծ ավանդի համար Հայաստանում Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլունին պարգևատրեց հայ առաջին տպագրիչ «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով:

Շնորհանդեսը շարունակեցին մայրաքաղաքի Գազիկ Ստեփանյանի անվան թիվ 135 դպրոցի սաները, իրենց իսկ բեմադրությամբ ներկայացնելով նմուշներ չինական առակներից:

Չինական առակների «Իմաստության արկղիկը» և Սերգո Երիցյանի «Չինական ճեպանկարներ» գրքերի շնորհանդեսն ավարտվեց՝ ճանապարհ բացելով դեպի ընթերցողը, քանի որ Հայաստանի բոլոր գրադարանները հարստացան նոր գրքերով:

